Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանին
Գտնվելու վայրի հասցե՝ ք. Երևան, Տիգրան Մեծի 23/1.

Հայցվոր՝
….
Պատասխանող՝ Հայաստանի Հանրապետության Ոստիկանություն
Գտնվելու վայրի հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան 130

Հայցադիմում
աշխատավարձը վճարելուն պարտավորեցնելու պահանջի մասին

1.ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

1) ...:

2) ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ ավագ քննիչը 2017 թվականի օգոստոսի 28-ին ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերի և 308-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցել է թիվ 62226817 քրեական գործը և նույն օրը նշված արարքները կատարելու կասկածանքով որոշում է կայացրել հայցվորին ձերբակալելու մասին, այնուհետև՝ 29.08.2017թ. նրա նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է կալանք: 2018թ. հունիսի 15-ին կալանքը փոխարինվել է գրավով:

3) Նախաքննության մարմնի 2017 թվականի սեպտեմբերի 26-ի որոշմամբ հայցվորին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով և 4 դրվագ ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով:

4) 2017 թվականի սեպտեմբերի 29-ին կազմվել է մեղադրական եզրակացություն, որը նույն թվականի նոյեմբերի 29-ին հաստատվել է դատախազի կողմից, ու քրեական գործը ուղարկվել է Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան, որը 2017 թվականի հոկտեմբերի 12-ին ընդունվել է վարույթ: Քրեական գործը գտնվում է դատական քննության փուլում:

5) ՀՀ ոստիկանության պետի 28.08.2017թ. թիվ 2274-Ա հրամանով հայցվորի լիազորությունները կասեցվել է այն հիմնավորմամբ, որ նա զբաղեցրած պաշտոնում մնալով կարող է խոչընդոտել ծառայողական քննությանը: Այդ ընթացքում նա աշխատավարձ չի ստացել (բացառությամբ՝ առաջին երկու ամսվա աշխատավարձը):

6) ՀՀ ոստիկանության պետի 06.09.2017թ. թիվ 2368-Ա հրամանով թիվ 2274-Ա հրամանը ուժը կորցրած է ճանաչվել և հայցվորի լիազորությունները 2017թ. օգոստոսի 30-ից կասեցվել է «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասի 2-րդ պարբերության հիմքով[1]:

7) ՀՀ ոստիկանության պետի 06.09.2017թ. թիվ 2368-Ա հրամանի 3-րդ կետով ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության պետ Ե. Կարապետյանին հանձնարարվել է հրամանի մասին սահմանված կարգով և ժամկետով տեղեկացնել ոստիկանության կապիտան Հ-ին:

8)... :

9) 2018թ. դեկտեմբերի 7-ին հայցվորը զեկուցագիր է հասցեագրել ՀՀ ոստիկանության պետին, որին ի պատասխան 11.01.2019թ. գրությամբ հայցվորի պահանջը մասնակի բավարարվել է և «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասի հիման վրա նրան

[1] Հայցվորը Թիվ 2368-Ա հրամանի մասին առաջին անգամ տեղեկացել է ՀՀ ոստիկանության 20.03.2019թ. պատասխան գրությունից: Թիվ 2368-Ա հրամանը կցված չի եղել նաև քրեական գործին:

վճարվել է 2 ամսվա աշխատավարձ, իսկ մյուս ամիսների աշխատավարձի վճարման խնդրանքը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենք 43-րդ հոդվածի 9-րդ մասը կարող է հակասահմանադրական ճանաչել ՀՀ սահմանադրական դատարանը:

10) Հայցվորի ներկայացուցիչը 18.03.2019թ. դիմել է ՀՀ ոստիկանություն, աշխատավարձը վճարելու խնդրանքով, սակայն 20.03.2019թ. գրությամբ դիմումը մերժվել է:

2. ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

ՀՀ Սահմանադրություն

Հոդված 29. Խտրականության արգելքը

Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Հոդված 31. Մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիությունը

1. Յուրաքանչյուր ոք ունի իր մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունք:

2. Մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Հոդված 66. Անմեղության կանխավարկածը

Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

Հոդված 84. Արժանապատիվ գոյությունը և նվազագույն աշխատավարձը

1. Յուրաքանչյուր կարիքավոր և տարեց մարդ, օրենքին համապատասխան, ունի արժանապատիվ գոյության իրավունք:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի

Հոդված 60. Վարչական ակտի ուժի մեջ մտնելը

1. Գրավոր վարչական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին՝ սույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, եթե օրենքով կամ այդ ակտով այլ բան նախատեսված չէ:

«Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենք

43-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝

(...) Ոստիկանության ծառայողի նկատմամբ քրեական հետապնդում իրականացվելիս լիազորությունների ժամանակավորապես կասեցումը կատարվում է մինչև քրեական գործի ավարտը կամ մինչև տվյալ գործով դատարանի դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը: Այդ դեպքում աշխատավարձը վճարվում է մինչև երկու ամսվա համար, իսկ մնացած վճարումը կատարվում է գործի՝ արդարացնող հիմքով ավարտի դեպքում:

39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ոստիկանության ծառայողն իրավունք չունի՝ 1) կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից: Օրենքով նախատեսված սահմանափակումները տարածվում են նաև լիազորությունները կասեցված ոստիկանի նկատմամբ:

«Հայաստանի Հանրապետության ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենք

16.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ոստիկանության ծառայողը, որի նկատմամբ հարուցված է քրեական հետապնդում, մինչև քրեական հետապնդումը դադարեցնելը չի կարող նշանակվել նոր պաշտոնի, իր նախաձեռնությամբ ազատվել ոստիկանությունում ծառայությունից:

Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշում

Սույն գործի փաստական հանգամանքներին նման գործով Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումը

D.M.T. and D.K.I. v. Bulgaria գործով (բողոք N 29476/06) Եվրոպական դատարանը 27.07.2012թ. որոշմամբ իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ դիմողի (ոստիկանության ծառայողի) Եվրոպական կոնվենցիայով 8-րդ հոդվածով երաշխավորված իրավունքը խախտվել է, քանի որ դիմողը, ում լիազորությունները կասեցվել են, տևական ժամանակ աշխատավարձ չի ստացել, և դրան զուգահեռ հնարավորություն չի ունեցել դուրս գալու ոստիկանության ծառայությունից կամ այն համատեղելու այլ աշխատանքի հետ:

3. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԸ ՍՈՒՅՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«2017 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին» ՄԻՊ-ի տարեկան հաղորդման մեջ սույն հարցի վերաբերյալ նախատեսված է առանձին բաժին հետևյալ բովանդակությամբ.

> «5. Ոստիկանությունում ծառայությունից ազատումը Պաշտպանին հասցեագրված բողոքներում բարձրացվել է ոստիկանությունում ծառայությունից ազատման և դրանով պայմանավորված սոցիալական երաշխիքներից 86 օգտվելու հնարավորության սահմանափակման խնդիր: Այսպես, դիմողը հանդիսացել է ՀՀ ոստիկանության ծառայող, լրացել է վերջինիս աշխատանքային գործունեության 20 տարին և այդ պահից ձեռք է բերել կենսաթոշակի իրավունք: Այնուհետև 6 ամիս անց պաշտոնեական լիազորությունների չարաշահում թույլ տալու պատճառով ՀՀ ոստիկանապետի հրամանով ժամանակավորապես դադարեցվել են դիմողի լիազորությունները, որից հետո մեկ այլ հրամանով ազատվել է զբաղեցրած պաշտոնից և գրանցվել կադրերի ռեզերվում: Դիմողը ՀՀ ոստիկանապետին զեկուցագրեր է ներկայացրել ոստիկանությունում ծառայությունից ազատվելու և երկարամյա ծառայության կենսաթոշակի անցնելու խնդրանքով: Սակայն ստացել է մերժում այն պատճառաբանությամբ, որ համաձայն «ՀՀ ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքի 16.1-րդ հոդվածի 1-ին մասի՝ ոստիկանության ծառայողը, որի նկատմամբ հարուցված է քրեական հետապնդում, մինչև քրեական հետապնդումը դադարեցնելը չի կարող նշանակվել նոր պաշտոնի, իր նախաձեռնությամբ ազատվել ոստիկանությունում ծառայությունից: Անձին աշխատանքից չազատելու և կադրերի ռեզերվից սահմանված ժամկետից առավել պահելու արդյունքում անձի ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված կենսաթոշակի անցնելու իրավունքը չի ապահովվել, քանի որ նա չի կարողացել անցնել երկարամյա ծառայության կենսաթոշակի: «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ ոստիկանության ծառայողները ոստիկանությունում ծառայությունից ազատվում են սահմանված կարգով կադրերի ռեզերվից հանվելու դեպքում: Նույն օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ոստիկանության ծառայության կադրերի ռեզերվում ոստիկանության ծառայողի միանգամյա գտնվելու առավելագույն ժամկետը վեց ամիս է (բացառությամբ նույն հոդվածի չորրորդ մասով սահմանված դեպքերի), բայց ոչ ավելի, քան համապատասխան խմբի համար սահմանված ծառայության առավելագույն ժամկետի լրանալը: Մյուս կողմից, «ՀՀ ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքի 16.1-րդ հոդվածի 1-ին մասի՝ ոստիկանության ծառայողը, որի նկատմամբ հարուցված է քրեական հետապնդում, մինչև քրեական հետապնդումը դադարեցնելը չի կարող նշանակվել նոր պաշտոնի, իր նախաձեռնությամբ ազատվել ոստիկանությունում ծառայությունից: Ստացվում է, որ «Ոստիկանությունում ծառայության մասին» և «ՀՀ ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքները պարունակում են դրույթներ, որոնցից մեկի կիրառումով խախտվում է մյուսը, քանի որ մի կողմից ոստիկանության ծառայության կադրերի ռեզերվում ոստիկանության ծառայողի գտնվելու ժամկետը 6 ամիս է, մյուս կողմից էլ՝ անձը, ում նկատմամբ հարուցված է քրեական հետապնդում, մինչև դրա դադարեցնելը չի կարող ոստիկանությունում ծառայությունից ազատվել իր նախաձեռնությամբ: Նշվածը հաշվի առնելով՝ Պաշտպանի կողմից ՀՀ ոստիկանությանն առաջարկվել է համապատասխան միջոցներ ձեռնարկել պրակտիկայում նշված կարգավորումների կիրառման, ինչպես նաև նշված իրավիճակներում քաղաքացիների աշխատանքի ընտրության ազատության և կենսաթոշակի անցնելու իրավունքի իրացման ապահովման ուղղությամբ: ... Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է «ՀՀ ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքի 16.1-րդ հոդվածի 1-ին մասում կատարել փոփոխություն՝ ամրագրելով, որ «Ոստիկանության ծառայողը, ում նկատմամբ հարուցված է քրեական հետապնդում, մինչև քրեական հետապնդումը դադարեցնելը չի կարող նշանակվել նոր պաշտոնի: Նա չի կարող իր նախաձեռնությամբ ազատվել ոստիկանությունում ծառայությունից, բացառությամբ «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի հիմքով՝ սահմանված կարգով կադրերի ռեզերվից հանվելու դեպքում:»:

«2018 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին» ՄԻՊ-ի տարեկան հաղորդման մեջ սույն հարցի վերաբերյալ նախատեսված է առանձին բաժին հետևյալ բովանդակությամբ.

> «Համակարգային առումով 2018 թվականին շարունակվել է չլուծված մնալ դեռևս 2017 թվականից Պաշտպանի բարձրաձայնած ոստիկանության ծառայողի նախաձեռնությամբ ոստիկանությունում ծառայությունից ազատվելու և նոր պաշտոնի նշանակվելու հնարավորության սահմանափակման խնդիրը: «ՀՀ ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքի 16.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ոստիկանության ծառայողը, որի նկատմամբ հարուցված է քրեական հետապնդում, մինչև քրեական հետապնդումը դադարեցնելը չի կարող նշանակվել նոր պաշտոնի, իր նախաձեռնությամբ ազատվել

ոստիկանությունում ծառայությունից: «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքով նախատեսվում են ոստիկանության ծառայողի նկատմամբ կիրառվող վարձատրությամբ կատարվող աշխատանքի սահմանափակումներն: Ընդ որում՝ օրենքի 39-րդ հոդվածի իրավակարգավորումների վերլուծության արդյունքում ստացվում է, որ ոստիկանության ծառայողն այլ աշխատանք չի կարող կատարել, բացի՝ գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքը: «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի և «ՀՀ ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքի 16.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ոստիկանության ծառայողն իր նկատմամբ քրեական հետապնդում իրականացվելու դեպքում և ոստիկանությունում իր ծառայությունները կասեցվելու պարագայում միաժամանակ զրկված է լինում թե՛ սեփական նախաձեռնությամբ ոստիկանությունում ծառայությունից ազատվելու հնարավորությունից, թե՛ այլ պաշտոնի նշանակվելու կամ գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից բացի այլ աշխատանք կատարելու հնարավորությունից: Ավելին, «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված կարգով ոստիկանության ծառայողի նկատմամբ քրեական հետապնդում իրականացվելիս լիազորությունների ժամանակավորապես կասեցման պարագայում վերջինիս աշխատավարձը վճարվում է մինչև երկու ամսվա համար, իսկ մնացած վճարումը կատարվում է գործի՝ արդարացնող հիմքով ավարտի դեպքում: Հիմք ընդունելով վերը նշված օրենքների իրավակարգավորումները՝ դրանց բովանդակային և համադիր վերլուծությամբ կարող ենք փաստել, որ ստեղծվում է մի իրավիճակ, երբ ոստիկանության ծառայողի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու դեպքում վերջինս ստանում է աշխատավարձ ոչ թե ծառայությունների ժամանակավոր կասեցման ամբողջ ժամանակահատվածի, այլ միայն այդ ժամանակահատվածի մի մասի համար՝ այդ ընթացքում զրկված լինելով ոստիկանությունում ծառայությունից ազատվելու և այլ աշխատանք կատարելու միջոցով ապրուստի միջոց վաստակելու հնարավորությունից: Ներկայացվածը խոչընդոտ է առաջացնում անձի՝ Սահմանադրությամբ ամրագրված աշխատանքի ազատ ընտրության իրավունքի իրագործման համար»:

4. ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

4.1. Հայցվորի լիազորությունները կասեցնելու մասին թիվ 2368-Ա հրամանը մինչև 05.04.2019թ. ուժի մեջ մտած չլինելու պայմաններում հայցվորին աշխատավարձ չվճարելու իրավաչափությունը

ՀՀ ոստիկանության 20.03.2019թ. պատասխան գրությունից հայցվորին առաջին անգամ հայտնի է դարձել, որ ՀՀ ոստիկանության պետի 06.09.2017թ. թիվ 2368-Ա հրամանով ՀՀ ոստիկանության պետի թիվ 2274-Ա հրամանը ուժը կորցրած է ճանաչվել և հայցվորի լիազորությունները կասեցվել է «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասի 2-րդ պարբերության հիմքով (Թիվ 2368-Ա հրամանը քրեական գործին կցված չի եղել):

ՀՀ ոստիկանության պետի 06.09.2017թ. թիվ 2368-Ա հրամանի 3-րդ կետով ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության պետ Ե. Կարապետյանին հանձնարարվել է հրամանի մասին սահմանված կարգով և ժամկետով տեղեկացնել Հ-ին: Հրամանի այս պահանջը չի կատարվել, հայցվորը՝ ինչպես կալանքի տակ գտնվելու ընթացքում, այնպես էլ դրանից հետո (մինչև 20.03.2019թ. դիմումի պատասխանը ստանալը) տեղեկացված չի եղել նման հրամանի գոյության մասին:

Հայցվորը թիվ 2368-Ա հրամանի պատճենը, իր դիմումի համաձայն, ստացել է 04.04.2019թ.: Նման փաստական հանգամանքների պարագայում հայցվորի աշխատավարձը չվճարելու իրավաչափությունը որոշելու համար պետք է պարզել հետևյալ երկու փոխկապակցված իրավական հարցերը.

1) հայցվորի լիազորությունը կասեցնելու մասին թիվ 2368-Ա հրամանը երբ է ուժի մեջ մտել.

2) ոստիկանի լիազորությունները կասեցնելու հրամանը ուժի մեջ մտած չլինելու պարագայում թույլատրելի է արդյոք չվճարել ոստիկանի աշխատավարձը:

Առաջին հարցի պատասխանը: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածը (Վարչական ակտի ուժի մեջ մտնելը) սահմանում է. «1. Գրավոր վարչական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին՝ սույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, եթե օրենքով կամ այդ ակտով այլ բան նախատեսված չէ:» ՀՀ վճռաբեկ դատարանը իր որոշումներում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ գրավոր վարչական ակտի ընդունումը բավարար չէ, գրավոր վարչական ակտի իրավական համակարգում ի հայտ գալու և գործելու համար անհրաժեշտ է նաև, որ օրենքով սահմանված կարգով այդ վարչական ակտը մտնի ուժի մեջ: Հաշվի առնելով վերոգրյալը՝ օրենսդիրը վարչական ակտը վիճարկելու օրենքով սահմանված ժամկետի հոսքը պայմանավորել է ոչ թե վարչական ակտի ընդունմամբ, այլ այդ ակտի՝ օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտնելու հետ (տե՛ս, Երևանի քաղաքապետարանն ընդդեմ Արմենուհի

Դալիբալթյանի թիվ ՎԴ/2499/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 10.12.2014թ. որոշումը):

Կարծում ենք, որ հայցվորի լիազորությունները կասեցնելու մասին ՀՀ ոստիկանության պետի 06.09.2017թ. թիվ 2368-Ա անբարենպաստ վարչական ակտը իրավական համակարգում ի հայտ է գալիս և գործում է, այսինքն՝ առաջացնում է իրավական հետևանքներ, եթե այն մտել է օրինական ուժի մեջ:

ՀՀ ոստիկանության պետի 06.09.2017թ. թիվ 2368-Ա հրամանում այդ ակտը ուժի մեջ մտնելու այլ ժամկետ նախատեսված չէ, ուստի այն ուժի մեջ է մտնում հայցվորին իրազեկելուն հաջորդող օրվանից: Հայցվորն թիվ 2368 հրամանի մասին առաջին անգամ իմացել է ՀՀ ոստիկանության 20.03.2019թ. պատասխան գրությունից, իսկ այդ հրամանի պատճենը իր դիմումի համաձայն ստացել է 04.04.2019թ., ուստի այն ուժի մեջ է մտել իրազեկելուն հաջորդող օրվանից՝ 05.04.2019թ.:

Այսպիսով՝ տվյալ գործով հացվորի լիազորությունները կասեցնելու մասին թիվ 2368-Ա հրամանը մինչև 05.04.2019թ. ուժի մեջ մտած չի եղել, սակայն այդ ողջ ժամանակահատվածում հայցվորը, աշխատավարձ չի ստացել օրենքով սահմանված կարգով ուժի մեջ չմտած վարչական ակտի կիրառմամբ:

Երկրորդ հարցի պատասխանը: «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենք 43-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ «Ոստիկանության ծառայողի նկատմամբ քրեական հետապնդում իրականացվելիս լիազորությունների ժամանակավորապես կասեցումը կատարվում է մինչև քրեական գործի ավարտը կամ մինչև տվյալ գործով դատարանի դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը: Այդ դեպքում աշխատավարձը վճարվում է մինչև երկու ամսվա համար, իսկ մնացած վճարումը կատարվում է գործի՝ արդարացնող հիմքով ավարտի դեպքում»:

Ինչպես նկատում ենք, սույն նորմն աշխատավարձը պահելու հիմքը կապում է բացառապես քրեական հետապնդում իրականացնելու կապակցությամբ ոստիկանի լիազորությունները կասեցնելու հետ: Այլ կերպ ասած, եթե ոստիկանի լիազորությունները իրավաբանորեն կասեցված չեն (այսինքն՝ լիազորությունը կասեցնելու մասին վարչական ակտը ուժի մեջ չի մտել), ապա բացակայում է ոստիկանի աշխատավարձը չվճարելու իրավական հիմքը:

4.2. Լիազորությունները կասեցված ոստիկանին աշխատավարձ չտրամադրելու մասին «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասի 2-րդ պարբերությամբ ամրագրված դրույթի իրավաչափությունը

Եթե նույնիսկ ընդունենք, որ հայցվորի լիազորությունները կասեցնելու մասին որոշումը մտած է եղել օրինական ուժի մեջ, ապա, այդ պարագայում էլ, հայցվորին աշխատավարձ չտրամադրելու օրենսդրական կարգավորումը հակասում է ՀՀ Սահմանադրության 31-րդ, 66-րդ հոդվածներին և Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածին:

«Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասի 2-րդ պարբերությամբ ամրագրված «***աշխատավարձը վճարվում է մինչև երկու ամսվա համար, իսկ մնացած վճարումը կատարվում է գործի՝ արդարացնող հիմքով ավարտի դեպքում»*** դրույթը խախտել է հայցվորի մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը և հայցվորին զրկել է արժանապատիվ՝ նույնիսկ նվազագույն գոյության հնարավորությունից (1), այն ակնհայտ խտրական մոտեցում է նախատեսում ոստիկանության ծառայողի իրավունքների և օրինական շահերի նկատմամբ (2) և խախտում է անմեղության կանխավարկածի իրավունքը (3):

1. Մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքի խախտումը և արժանապատիվ գոյության հնարավորությունից զրկելը: Աշխատավարձը հանրային ծառայողի կենսագոյության ապահովման նվազագույն միջոցներից է, որն անձին հնարավորություն է տալիս կազմակերպելու իր մասնավոր և ընտանեկան կյանքը:

«Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ոստիկանության ծառայողն իրավունք չունի՝ կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից: Օրենքով նախատեսված սահմանափակումները տարածվում են նաև լիազորությունները կասեցված ոստիկանի նկատմամբ:

«Հայաստանի Հանրապետության ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքի 16.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ոստիկանության ծառայողը, որի նկատմամբ հարուցված է քրեական հետապնդում, մինչև քրեական հետապնդումը դադարեցնելը չի կարող նշանակվել նոր պաշտոնի, իր նախաձեռնությամբ ազատվել ոստիկանությունում ծառայությունից[2]:

Ներկայումս ստեղծվել է մի իրավիճակ, երբ հայցվորի լիազորությունների կասեցման պայմաններում վերջինս մի կողմից՝ չի ստանում աշխատավարձ կամ որևէ այլ հատուցում, մյուս կողմից՝ չի կարող համատեղությամբ կատարել այլ աշխատանք՝ բացի գիտամանկավարժական գործունեություն իրականացնելուց, կամ չի կարող իր նախաձեռնությամբ ազատվել ոստիկանության ծառայությունից:

Նման կարգավորումը խախտել է հայցվորի մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը և վտանգում է նրա արժանապատիվ գոյության հնարավորությունը:

Եվրոպական դատարանը սույն գործին նման՝ 24.07.2012թ. D.M.T. and D.K.I. v. Bulgaria գործով կայացված որոշման 113-րդ կետում նշել է.

> «Դիմողի կողմից բողոքարկվող իրավիճակի առավել վճռական կողմը իր աշխատանքի ժամանակավոր կասեցման ընթացքում այլ աշխատանքի անհնարինությունն է, այդ թվում՝ մասնավոր հատվածում աշխատանքի անցնելու արգելքը: Դատարանը հիշեցնում է, որ այդ սահմանափակումը բխում է պետական պաշտոնյայի կարգավիճակից և արդարացված է պետական ծառայության նկատմամբ շահերի բախման կանխարգելման նպատակով, եթե նույնիսկ մարդու լիազորությունները ժամանակավորապես կասեցվել է: Դատարանը գտնում է, որ այս ընդհանուր արգելքի կիրառումը դիմումատուի գործի նկատմամբ, երբ նրա լիազորությունները կասեցված են եղել ավելի քան վեց տարի ժամկետով, չափազանց մեծ բեռ էր նրա վրա: Իշխանությունը չներկայացրեց որևէ համոզիչ բացատրություն, թե ինչու չեն թույլատրում ծառայողին ազատել իր պարտականություններից, ինչը հնարավորություն կտար նրան որոնել այլ աշխատանք: Դատարանը համոզված չէ, որ նման հնարավորություն տալով որևէ կերպ հնարավոր էր խոչընդոտել քրեական դատավարության իրականացմանը: Դիմողի լիազորությունների կասեցման այս վնասակար և երկարատև հետևանքները չափազանց մեծ ծանրություն էր, որն ազդել է նրա իր անձնական կյանքի վրա: Դատարանը գտել է, որ այս սահմանափակումը չի կարելի համարել անհրաժեշտ և համաչափ հետապնդվող իրավաչափ նպատակին»:

Եվրոպական դատարանը սույն գործով միաձայն հաստատել է Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում:

Իրավաբանորեն հանրային ծառայության մեջ գտնվող անձին աշխատավարձից զրկելը նշանակում է զրկել ոչ միայն սեփականությունից (բառի ինքնավար իմաստով), այլև կենսագոյության հնարավորությունից:

Հանրային ծառայողների համար քրեական հետապնդման հիմքով աշխատավարձը պահպանելու մասին իրավակարգավորումը նպատակ է հետապնդում հոգալու ծառայողի նյութական և սոցիալական այլ նվազագույն կարիքները, հակառակ պարագայում ծառայողը հայտնվում է այնպիսի իրավիճակում, երբ մի կողմից՝ չի կարող ընտրել վարձատրվող այլ աշխատանք, մյուս կողմից՝ առանց աշխատավարձի չի կարող ապահովել իր և ընտանիքի արժանապատիվ գոյությունը:

Տվյալ դեպքում՝ հայցվորը քրեական գործի ողջ ընթացքում (քրեական գործը, որը փաստական և իրավական հանգամանքներով բարդ գործ չէ, ընթանում է 2017 թվականի օգոստոսի 28-ից) զրկվում է ոչ միայն աշխատավարձի՝ որպես սեփականության իրավունքից, այլև ՀՀ Սահմանադրության 84-րդ հոդվածով երաշխավորված արժանապատիվ գոյության օբյեկտիվ իրավունքից, որի ապահովումը պետության սահմանադրական պարտականությունն է:

Աշխատավարձի իրավունքն ապահովված է նաև մի շարք միջազգային փաստաթղթերով: «Աշխատավարձի պաշտպանության մասին» կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ գործատուներին արգելվում է որևէ ձևով սահմանափակել աշխատողների՝ աշխատավարձի տնօրինման ազատությունը:

2. Նեգատիվ խտրական մոտեցում: «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասում նախատեսված է բացասական խտրական կարգավորում: Բանն այն է, որ հանրային ծառայության մի շարք ոլորտներում քրեական հետապնդում հարուցելու կամ ծառայողական

[2] Քրեական հետապնդման վիճակում գտնվող ոստիկանի նախաձեռնության ծառայությունից ազատվելու արգելքը, որը չունի տեսանելի որևէ իրավաչափ նպատակ, (այս մասին տե՛ս Եվրոպական դատարանի D.M.T. and D.K.I. v. Bulgaria գործը) առերևույթ հակասում է ՀՀ Սահմանադրության 57-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ աշխատանքի ազատ ընտրության իրավունքին:

քննություն կատարելու հիմքով անձի լիազորությունները կասեցնելու ողջ ժամանակահատվածում ծառայողի աշխատավարձը պահպանվում է: Այսպես՝

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի համաձայն՝ **դատախազի լիազորությունների կասեցման ժամանակահատվածում նրա աշխատավարձը պահպանվում է:**

«ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ քննչական կոմիտեի ծառայողի լիազորությունների կասեցման ժամանակահատվածում նրա **աշխատավարձը պահպանվում է:**

«Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենք 37.1-րդ հոդվածի համաձայն՝ քրեական գործերով որպես մեղադրյալ ներգրավված մաքսային ծառայողի պաշտոնական լիազորությունները կասեցվում են **հիմնական աշխատավարձի պահպանմամբ մինչև մեղադրանքի հանվելը:**

Ինչպես նկատում ենք՝ նշված օրենքներում նախատեսված է ծառայողի լիազորությունների կասեցման ժամանակահատվածում նրա **աշխատավարձը պահպանելու** մասին դրույթներ, մինչդեռ «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքով նախատեսված է հակառակ կարգավորումը: Համանման կարգավիճակ ունեցող անձանց վերաբերյալ տարբերակված օրենսդրական կարգավորումները թույլատրելի են, եթե նման տարբերակումը հետապնդում է տեսանելի և իրավաչափ նպատակ: Տվյալ դեպքում, անհասկանալի է, թե օրենսդիրն ինչ իրավաչափ նպատակից ելնելով է, օրինակ՝ ՀՀ քննչական կոմիտեի՝ լիազորությունները կասեցված քննիչի համար (ի դեպ՝ Հատուկ քննչական ծառայության քննիչների համար աշխատավարձը պահպանելու մասին դրույթ նույնպես նախատեսված չէ) պահպանել նրա աշխատավարձը, իսկ ՀՀ ոստիկանության ծառայողների, որոնց գործառույթները մի շարք ոլորտներում նույնական են քննիչի գործառույթների հետ (նյութերի նախապատրաստման փուլում, նախնական քննության փուլում՝ հետաքննության և նախաքննության ընթացքում կատարվող քննչական գործողությունները) նախատեսված է հակառակ տրամաբանության կարգավորում: Իրավաչափ նպատակի բացակայության դեպքում, պետք է փաստել, որ օրենսդիրը՝ ՀՀ լիազորությունները կասեցված ոստիկանի նկատմամբ, ՀՀ դատախազների և ՀՀ քննչական կոմիտեի քննիչների համեմատության դրսևորել է խտրական մոտեցում[3]:

3. Անմեղության կանխավարկածի խախտում: ՀՀ Սահմանադրության 66-րդ հոդվածի համաձայն՝ հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով: ՀՀ քր. դատ. օր-ի 18-րդ հոդվածի 5-րդ մասից բխում է, որ կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ կիրառվող հարկադրանքի միջոցները չեն կարող պարունակել պատժի տարրեր:

Հանրային ծառայող հանդիսացող մեղադրյալի լիազորությունները ժամանակավորապես դադարեցնելու դեպքում նա դեռևս համարվում է անմեղ, ուստի նրա աշխատավարձը չպահպանելը նշանակում է, որ պետությունը ելնում է մեղադրյալի մեղավորության կանխավարկածից և նրան զրկում է աշխատավարձի իրավունքից՝ թեև նա գտնվում է պետական ծառայության մեջ:

Վերոգրյալից բխում է, որ անմեղության կանխավարկածը, ինքնին, արգելում է հանցանք կատարելու մեջ մեղադրվող աշխատողի հետ լուծել աշխատանքային պայմանագիրը[4], քանի դեռ նրա մեղավորությունը հաստատված չէ օրինական ուժի մեջ մտած դատավճռով, ուստի քանի դեռ ոստիկանության ծառայողի լիազորությունները ժամանակավորապես կասեցված են, նա պետք է օգտվի նաև վարձատրություն կամ այլ հատուցում ստանալու իրավունքից: Հակառակ մոտեցման դեպքում՝ աշխատավարձը պահելը կարող է գնահատվել որպես պատիժ:

Նկատի ունենալով ՀՀ Սահմանադրության 3-րդ, 29-րդ, 31-րդ, 66-րդ հոդվածները, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածը, և ղեկավարվելով ՀՀ քաղ. դատ. օր-ի 3-րդ հոդվածի 1-ին մասով, 120-րդ, 121-րդ հոդվածներով՝

---

[3] «Աշխատանքի և զբաղվածության բնագավառում խտրականության մասին» Կոնվենցիայի (ՀՀ-ի համար ուժի մեջ է մտել 29.07.1995թ.) 1–ին հոդվածի համաձայն ՝Սույն Կոնվենցիայի նպատակների համար «խտրականություն» հասկացությունը ներառում է. (ա) ռասայի, մաշկի գույնի, սեռի, կրոնի, քաղաքական համոզմունքի, ազգային ծագման կամ սոցիալական պատկանելության հիմքով ցանկացած տարբերակում, բացառում կամ նախապատվություն, որի հետևանքով վերանում կամ խախտվում է աշխատանքի ու զբաղվածության բնագավառում հնարավորության կամ վերաբերմունքի հավասարությունը, (բ) աշխատանքի և զբաղվածության բնագավառում հնարավորության կամ վերաբերմունքի հավասարության վերացմանը կամ խախտմանը հանգեցնող ցանկացած այլ տարբերակում, մերժում կամ նախապատվություն, որ կարող է սահմանել համապատասխան անդամը՝ խորհրդակցելով գործատուների և աշխատավորների ներկայացուցչական կազմակերպությունների, որտեղ այդպիսիք կան, և այլ համապատասխան մարմինների հետ: 2. Որոշակի աշխատանքի հետ կապված ցանկացած տարբերակում, բացառում կամ նախապատվություն, որը հիմնված է այդ աշխատանքին հատուկ պահանջների վրա, խտրականություն չի համարվում:

[4] Տե՛ս Ñàâèõêèé Ã.Ì. Ïðãçóìïöèÿ íåâèíîâíîñòè. ÷ôî îçíà÷àåò? êîìó íóæíà? êàê îðèãèíàëüíî? Ì.: Íîðìà, 1997, ¿ç 27, Ê³ãã³ïñÜ³Ý Ø. ²ÝÙ»ÕáõÃÜ³Ý ï³ÝË³í³ñÏ³ÍÁ áñå»ë ³ñ¹³ñ³¹³ïáõÃÜ³Ý Çñ³Ï³Ý³óÙ³Ý ëÏ½µáõÝù, Ð³Ù³ëï³ÝÇ Ð³Ýñ³å»ïáõÃÜáõÝ, 8 ë»ãí»Ùµ»ñÇ 2000, Õ³Ùµ³ñÜ³Ý ². ²ÝÙ»ÕáõÃÜ³Ý Ï³ËË³í³ñÏ³ÍÁ »õ ³ßË³ï³Ýù³ÙÇÝ å³ÜÙ³Ý³·ñÇ ¹³¹³ñÜ³Ý ÑÇÙù»ñÁ: Æñ³í³·ÇïáõÃÜ³Ý Ñ³ñó»ñ, ÄÇí 1-2, 2002, ¿ç»ñ 95-101:

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ

Պարտավորեցնել ՀՀ ոստիկանությանը հայցվորին վճարելու՝ նրա լիազորությունների կասեցման ժամանակահատվածում (2017թ. օգոստոսի 30-ից մինչև քրեական գործով դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը) չվճարված աշխատավարձը։

Հայցվորի ներկայացուցիչ՝